ռեան գետոյն ընթացքը, որ 3—4 ժամ կը տևէ. հարաւն Մզրախ և Բրճօյի շղթայն, արևմուտքը՝ Շեռեանայ և Խալեազի մէջ բարձրացած Կէլին (հարս) և Բարազան հսկայ լեռներն, իսկ ի հիւսիսից՝ Կուռիս լերան ի հարաւ արևելս իջնալով սպառուած ճիւղն։

Շեռեան աջ կողմէն այս ընթացքի մէջ երեք ջրեր կընդունի։

1. Կելեանայ ջուր, որ Բարազան մեծ լեռնէ կիջնայ, 4 ժամէն կխառնուի Շեռեանայ։

2. Այիգանայ ջուր որ Կէլին և Մզրախ սարերէն կիջնայ։

3. Մզրախ և Բրճօի կիրճերէն 2 բարակ ջրեր կիջնան, 1/2 ժամ իրարմէ հեռուն կընթանան և կը խառնուին ուղղակի Շեռեանայ։

Շեռեանայ ձախ ափին վերայ կան չորս գիւղ, որ Շեռեանայ գլխու մօտ լինելուն՝ Շեռեանայ գլխու Միւտիւրութեան կը պատկանին, որք են։

1. ԽԱՆՈՅ.—Ուչխարաց գոմի վայր է 5 տուն ք. բնակչօք, կը գտնուի գետէն քիչ հեռի՝ լերան կողի վերան, ուր ոչխարներ կը ձմեռեն։

2. ՌԱՄԻԿԱՆ.—Խանոյի 1 ժամ արևելքն՝ 1/4 ժամ գետէն հեռի, Ջեռական հայ գիւղէ երկու ժամ հարաւ՝ 25 տուն ք. բն. ունի և գաղթական թուրքերով խառն։

3. ՇԱՀՆԱԶԱՐ կամ Վերին գիւղ.—Այս գիւղը Ռամիկանէ 1 ժամ արևելեան հարաւ՝ 20 տուն ք. բն.

4. ՄԱՐՏՈՅ.—Շահնազարից 1 ժամ արևելք, Ջրի ափին վերայ, Խաստուր հայ գիւղից 1 ժամ յարևմուտս 30 տուն ք. բնակչօք։